« Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ մինչև
« ցեօթն ամ՝ խնդրելով յամենաղորմէն Ա-
« տուծոյ . . . : Եւ ապա յարուցեալ ես Վե-
« հիկ՝ չոգայ առ սուրբ հայրապետն Ա-
« բաս . . . . :

« Ես Աղրիանէ, որ զյիշատակարանս գրե-
« ցի, մաղթեմ յիշել զանարժանութիւնս իմ
« ի յընթերցողացդ, և զհայրապետն Աբաս
« մի՛ ևս մոռանալ, յորոյ ժամանակս լոյս
« աշխարհի ծագեցաւ, ընդ նմին և զՎեհիկ՝
« կարապետ նոցին, յիշեսցէ՛ Տէր Աստուած
« ողորմութեամբն իւրով մեծաւ, և որք յի-
« շէքդ՝ ձեզ վարձս ընդ երանելի վկայիցն
« հատուսցէ՛ Քրիստոս այժմ և յաւիտեանս.
« ամէն * » :

Ինչպէս կը տեսնուի՝ Վեհիկ գրած է պատ-
մութիւնը, ուստի և կը խօսի միշտ առաջին
դէմքով և ասեմ, ընդ միտս իմ, չոգայ, ես
Վեհիկ, եւայլն եւայլն. յետոյ Աղրիանէ ա-
նուն մէկը օրինակած է Վեհիկի պատմու-
թիւնը իրմէ ևս աւելցնելով այն յիշատա-
կարանը. « Ես Աղրիանէ և այլն » : Յետոյ
ալ Մովսէս Կաղանկայտուացին՝ միամիտ մէ-
կը՝ գտած է Աղրիանէի օրինակութիւնը և
յիշատակարանովը միասին առած է իր պատ-
մութեան մէջ :

Էջ 277, ԺԵ. գլուխը « Վասն սատկա-
« ցեալ սովոյն, սրոյն և գերութեանն ի վիա-
« սին » քաղուած է Վիրոյի պատմութենէն,
ինչպէս որ գլխուն վերջը կը յիշատակուի.
« Ես Վիրոյ՝ Աղուանից և Լփնաց և Զողայ
« կաթողիկոս, թողում ասել զայլն ամենայն,
« զպէսպէս զազրալիս՝ զմարմնոյ սևութիւնս
« և կնոտութիւնս գլխոց, և այլն, և այլն . . . »
(Մով. Կաղ. Ա. հատ. էջ 279–280) :

Էջ 417 Ծ. գլուխը « Վասն Յովսեփայ
« անապատականի բնակելոյ յԱրձախ, և երթն
« յԵրուսաղեմ, ընդ նմին և բերումն նոր-
« խարացն սրբոց », քաղուած է նոյն Յով-
սէփի անապատականի պատմութենէն բառ
առ բառ. « Ի թագաւորութեանն Հերակլիոսի
« և Հաղվանից թագաւորութեանն Յազկերտի,
« և ի կաթողիկոսութեանն Հայոց Եզրի, և
« ի սպարապետութեանն Մուշեղի, ի Սի-
« նեաց տէրութեանն Գրիգորի, եպիսկո-
« պոսութեանն Մաթուսաղայի . . . գնացի ես
« Յովսեփ անապատական ի գաւառէն Գե-
« ղամայ՝ յանապատէ Բրտի այրից վասն չար
« նեղութեան ժամանակի . . . խոյս տուեալ
« իմ՝ եկի ի գաւառս Արձախայ . . . ընկա-
« լեալ զիս զանարժանս . . . Տնկեցաւ ի սիրտ
« իմ ցանկութիւն ստանալ ի նշխարաց
« սրբոյն Յովհաննու . . . ընկալեալ իմ Յով-
« սեփայ՝ բերի ի նոյն վկայարան . . . » :

Ստորագծուած բառերը կը ցուցնեն թէ
այս գլուխն ալ բառացի օրինակութիւն է
առաջին հեղինակէն :

Այս օրինակները բաւական են արդէն
ցուցնելու համար թէ խմբագրութիւն է Կա-
ղանկայտուացին, և այն հատուածները որ
Շահնազարեան մէջ կը բերէ և որոնց մէջ
արդարև ականատես մըն է միշտ խօսողը,
գրուած են ո՛չ թէ Կաղանկայտուացի Մով-
սէսէն, այլ անոր առաջնորդող պատմագիր-
ներէ. և Մովսէս բառ առ բառ կ՚օրինակէ
անոնցմէ :

Այս պատճառով է որ Կաղանկայտուացին
խառնակ պատմութիւն մըն է լի կրօնական
առասպելներով (հմմտ. 147–182, 193–211),
խաչի և սուրբ նշխարներու անվերջ գիւտե-
րով (հմմտ. էջ 417–420, 95–97, 147–157,
220–224, 325–333, 340–349). երբեմն դէպ-
քերն անկարգ (100–115), պակաս, խառնակ
(217), գլխաւոր արժէքը յիշատակութիւնն
է քառնի մօտ պաշտօնական թուղթերուն և
Դաւթակի ողբին :

Է

Ի՞նչ է սակայն Կաղանկայտուացիին գրու-
թեան բուն թուականը :

Ցիշուեցաւ թէ պատմութեան երրորդ գիր-
քը կը հասնի մինչև 914. ուրեմն Մովսէս
ալ այս թուականին մօտերը գրած պիտի
ըլլայ. դնենք 920 : Կրնայ առարկուիլ սա-
կայն որ — եթէ Կաղանկայտուացին 920ին
գրած է, Աստղիկ որ անկէ 84 տարիներ վերջ
կը գրէ, ինչո՞ւ համար չ՚յիշեր զայն : — Ա-
սոր ալ պատճառն այն պէտք է ըլլայ, որ Մով-
սէսի պատմութիւնը՝ իբրև հեռացած ցեղի
մը մասնաւոր պատմութիւնը՝ մնացած է
միայն իր միջավայրին՝ Աղուան երկրին մէջ,
և չատ ուշ տարածուած է Հայաստանի բնիկ
գաւառները :

Հրաչեայ Յ. Աճառեան

1897 Մայիս 10 Պարիզ

---

* « Ես Աղրիանէ » և այլն. Մոսկվայի տպագրութեան մէջ պատմութեան կարգէն վերցուած և ի տորև իջին դրուած է, իբրև յաւելուած կամ յիշատակարան գրչին և ոչ մասն պատմութեան : Ծ. Խ.